

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ*

Երևանում՝ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության մեկենասությամբ, հրապարակվել է Նիկողայոս Ադոնցի երկերի Զ հատորը, որն ընդգրկում է ակնանավոր պատմաբանի հրապարակախոսական ժառանգությունը: Հատորում զետեղված է 32 միավոր հոդված և նյութ, որոնցից 16-ը լույս է տեսնում առաջին անգամ¹:

Գիտական հանրությանը Ն. Ադոնցը հայտնի է գերազանցապես իբրև պատմաբան, ուստի նրա հրապարակախոսական ժառանգության հրապարակումը հասարակական լայն հնչեղություն ունեցող երևույթ պետք է համարել²: Դա է պատճառը, որ հատորը տպագրության պատրաստած պրոֆ. Պետրոս Հ. Հովհաննիսյանը առաջաբանում հանգամանալից կերպով ներկայացրել է Ադոնցի ազգային-հասարակական գործունեությունը, արժևորել նրա հրապարակախոսական վաստակը:

Ն. Ադոնցի սրտացավ և համակողմանի հետաքրքրությունը Հայկական հարցով և ընդհանրապես՝ հայոց քաղաքական ճակատագրով, սկիզբ առավ դեռևս Փարիզում ուսանելիս: Այստեղ նա հաճախում էր Հայկական հարցի առիթով կազմակերպվող ժողովներին՝ լսելով Մ. Չերազի, Ա. Ֆրանսի, Ժ. Կլեմանսոյի, Ֆ. դե Պրեսանսեի դասախոսությունները: Նման հետաքրքրասիրությունը շուտով վերածվեց նաև գործնական աշխատանքների: Արդեն 1904 թ. Ն. Ադոնցն ընտրվեց Սանկտ Պետերբուրգի Հայոց եկեղեցու գույքերի վարչության փոխնախագահ և մեծապես

*Ընդունվել է տպագրության 4.12.2012:

1 Տե՛ս **Ադոնց Նիկողայոս**, Երկեր, Զ (լրացուցիչ հատոր). Հրապարակախոսություն: Հրատարակության պատրաստեց՝ **Պ. Հ. Հովհաննիսյանը**, թարգմանիչներ՝ **Վ. Ա. Դիլոյան, Գ. Ա. Մադոյան, Օ. Ս. Վարդապարյան**: Հայկական մատենաշար Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան, N 136, Եր., ԵՊՀ հրատ., 2012, 531 էջ:

2 Ադոնց հրապարակախոսի «հայտնության» սկիզբը 1980-ականներն էին, բայց նրա աշխատանքները համակարգված բնույթ ստացան 1990-ականներին: Տե՛ս **Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ**: Անգլ. թարգմ. և հրատ. պատր.՝ **Վ. Ա. Դիլոյան**: Եր., «Երևանի համալսարան», 1989, 116 էջ: **Երկեր** 4 հատորով, Գտ. 1: **Հայկական հարց**: Կազմեց և ծանոթագրեց՝ **Պ. Հովհաննիսյան**, թարգմ.՝ Վ. Դիլոյանի, Եր., «Հայագիտակ», 1996, 244 էջ: **Адонц Н. Г. К разрешению Армянского вопроса**. Пер. Р. Коджоян, В. Д. Кармиршальян. Предисловие Дж. С. Киракосяна. ЦНИОН АН Арм. ССР. Научно-информационный бюллетень. Серия III: «Арменоведение за рубежом», N. 7.- А.: АН Арм. ССР, 1984, 75 с. **Adontz, Nikoghayos. Towards the Solution of the Armenian Question**. London: Eyre, Spottiswoode, Ballantyne & Company, 1920, 95 pp. Yerevan: Institute of Oriental Studies NAS RA, 2007, X+95 pp.

նպաստեց հայ ուսանողությանը նյութական աջակցություն կազմակերպելու գործին: Վճռորոշ էր նրա դերակատարությունը Ն. Մառի գլխավորած Անիի հնագիտական արշավախմբի ֆինանսավորման կազմակերպման գործում:

Ն. Ադոնցի ազգային-հասարակական գործունեությունն առավել ակտիվացավ 1907 թ. ստեղծված «Սանկտ Պետերբուրգի հայկական խմբակ» կազմակերպության փոխնախագահի պաշտոնում: Խմբակը, որը միավորում էր 216 անվանի հայ գործիչների, նպատակ ուներ «Ռուսական լայն հանրությանը ծանոթացնել Հայաստանի պատմությանն ու մշակույթին, արժեքներին, պետական-քաղաքական շրջանների մոտ բարձրացնել հայ ժողովրդին հուզող խնդիրները և բարենպաստ կարծիք ստեղծել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ»³:

Հայտնի է նաև, որ Հայկական հարցի վերաբացման շրջանում Ն. Ադոնցը Սիրական Տիգրանյանի հետ 1912 թ. վերջին այցելել է Կ. Պոլիս, իսկ 1916 թ. մայիսին կարևոր դեր է խաղացել Պետրոգրադում հայկական համագումարի կազմակերպման գործում: Ադոնցը ղեկավարել է նաև ազատագրված Վանի հնագիտական արշավախումբը՝ ծանր ապրելով Հայոց եղեռնը⁴:

1917 թ. Ռոստոմի և Մ. Աճեմյանի հետ միասին նա կարևոր դեր է ունեցել Բրեստի բանակցություններին մեկնող Վ. Տերյանի համար Հայկական հարցի մասին հատուկ թղթածրար նախապատրաստելու գործում:

Սփյուռքյան տարագրության շրջանում ևս Ադոնց հանրային գործիչը իր ողջ եռանդն էր սպաս է դրել Հայ Դատին. նա ակտիվորեն գործակցել է Ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների հետ, Փարիզում ընտրվել է «Հայ գրական ակումբի» նախագահ, ապա՝ Ավ. Ահարոնյանի 40-ամյա գրական գործունեության հորելյանական կենտրոնական հանձնաժողովի գործադիր մարմնի նախագահ, համասփյուռքյան այլ մարմինների անդամ:

Իր ակտիվ հասարակական գործունեությանը զուգահեռ՝ ականավոր պատմաբանը գրել է մեծ թվով հրապարակախոսական հոդվածներ, որոնց առանցքը և ընթերցողին ներկայացվող հատորի բովանդակության հիմնական մասը Հայաստանյայց եկեղեցու գործունեության տարբեր դրվագներին, Հայոց ցեղասպանությանը և Հայկական հարցին նվիրված հրապարակումներն են:

Ուստի դրանք պայմանականորեն կարելի է խմբավորել՝ հիմք ընդունելով հենց այդ թեմաները:

Առաջինի վերաբերյալ Ն. Ադոնցի հրապարակումներից ուշագրավ են «Մի էջ կաթողիկոսության մերձավոր անցյալից»⁵, «Հայոց Եկեղեցու

3 Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հտ. Զ., էջ 11:

4 «Զգիտեմ ինչպես եմ շնչում և ինչպես եմ ապրում այս բոլորից հետո»,- գրում էր նա այդ օրերին: Տե՛ս Երկեր, հտ. Զ., էջ 13: Ուստի պատահական չէ, որ 1916-1921 թթ. Ադոնցը ոչ մի գիտական աշխատանք չի հրատարակել: Նա ամբողջովին կլանված էր գաղթականների վիճակի բարելավման գործով և Հայկական հարցի լուծման փնտրտուքով:

5 Ի դեպ, հոդվածը նախատեսված էր հրատարակել Ս. Վրացյանի խմբագրած «Վէմ»-ում: Հիշատակենք, որ «Վէմ»-ում Ն. Ադոնցը հրապարակել է Ա. Բակունցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» և Ա. Աբեղյանի «Նոր հայերեն քերականություն» գրքերի գրախոսականները: Տե՛ս «Վէմ», Ա. տարի, 1933, N 1, սեպտեմբեր-հոկտեմբեր, Ա., էջ 5-13;

հազարվեց հարյուրամյակի նախօրեին», «Կաթողիկոսական ընտրություն և մամուլը»⁶, «Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա-ի հիշատակին», «Կարապետ Եզով», «Տ. Թորգոմ Սրբազան պատրիարքի հիշատակին» հոդվածներն ու ելույթները:

Երկրորդ, թեմայով ստեղծված գործերի շարքում առանձնանում է «Մեծ Եղեռնի տարելիցին» ուշագրավ հոդվածը⁷: Մեջքերենք Ն. Ադոնցի գնահատականներից ընդամենը մեկը. «Կան աղետներ, որ չեն մոռացվում և որքան հնանում, այնքան դառնանում են: Հրեշավոր ոճիրը, որին ճարակ եղանք ազգովին, անօրինակ է մարդկության տարագրության մեջ և տեսակով, և ծավալով»⁸: Հայոց Ցեղասպանության քաղաքական վերլուծականին նվիրված այս հոդվածը երբեմն վիճահարույց, բայց և ինքնատիպ մոտեցումներով, լրջորեն խորհելու տեղիք է տալիս, որի արդյունքում ընթերցողն անհրաժեշտաբար որոշակի եզրահանգումներ պետք է կատարի:

Երրորդ խումբը հիմնականում ընդգրկում է Հայկական հարցի հետեղեռնյան ընթացքի վերլուծականները՝ «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում» (հաշվետվություն Ս. Պետերբուրգի «Հայկական խմբակի» կողմից Կ. Պոլիս ուղևորության մասին), «Հայկական հարցը և գերմանական ծրագրերը», «Թուրքական հայտագիրը և Թուրքահայաստանը»⁹, «Քրդերի ներթափանցումը Հայաստան» (այս ուշագրավ հոդվածը, ցավոք, ոչ հայքղագետներին ծանոթ չէ), «Հոդային գիշումներ Թուրքիային», «Գերագույն խորհրդին տրվելիք հիշատակագրի նախագիծ», «Հայաստանի սահմանների խնդիրը»¹⁰, «Հայկական հարցի ներքին կողմերից մեկը», «Հայկական հարցը ամերիկյան սենատում»:

Նշված թեմաներին վերաբերող Ն. Ադոնցի հայեցակարգային նշանակության հոդվածներից կարելի է առանձնացնել 1918 թ. գրված «Առաջավոր Ասիայի հիմնահարցի լուծման շուրջ»¹¹ հրապարակումը, որում խստորեն քննադատելով հայ բնակչության նկատմամբ թուրքական բռնապետության իրականացրած վայրագ կոտորածները, Ն. Ադոնցը եզրակացնում

Դ. տարի, 1936, N 3, յուլիս-հոկտեմբեր, ԺՁ., էջ 46-51: Իսկ Ն. Ադոնցի երկերին «Վէմ»-ում անդրադարձել է Հովհ. Զավոյանը: Տե՛ս «Վէմ», Բ. տարի, 1934, թ. 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, Է., էջ 135-137:

6 Ուշագրավ է., որ Օրմանյան-Իզմիրյան ընտրապայքարին նվիրված այս հոդվածի ծանոթագրության մեջ Պ. Հովհաննիսյանը գետեղել է Ն. Ադոնցի դեմ ուղղված Լեոյի երկու պատասխան-հոդվածները, ինչը հրատարակչի պատմագիտական անաչառության վկայությունն է:

7 Առաջին տպագրությունը տե՛ս «Հայրենիք», Պոսթըն, 1928, N 8, էջ 68-76:

8 **Ադոնց Ն.**, Երկեր, հտ. Զ., էջ 248:

9 Այստեղ հիշատակության է արժանի Բրեստի չարաբաստիկ պայմանագրի ադոնցյան գնահատականը. «Աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը՝ Խորհրդային հանրապետությունը, հանձնեց ամենաժողովրդավարական, տառացիորեն պրոլետարական, դարերով շահագործված, ֆիզիկապես ստրկացված ժողովրդին աշխարհում ամենաբռնապետական պետության՝ թուրքական բռնակալության նգովքին ու անարգանքին» (Երկեր, հտ. Զ., էջ 141):

10 Մեջքերենք Ն. Ադոնցի հետևյալ ուշագրավ դիտարկումը. «Հայ արյունոտ դատը միայն քաղաքական հարց չէ, նա ժամանակակից մարդկության խղճի հարց է»: Տե՛ս Երկեր, հտ. Զ., էջ 241:

11 **Ադոնց Ն.**, Երկեր, հտ. Զ., էջ 149-177: Այս հրապարակումը 1920 թ. անգլերենով տպագրվել է Լոնդոնում:

էր. «Այժմ Հայաստանն ամբողջովին արյունաշաղախ իր զավակների արյունով, դատ ու դատաստան է պահանջում հանդեպ իր դարավոր դահիճների, իրավունք է պահանջում իր երջանկության դարբինը լինելու համար...»¹²:

Կրկին 1918 թվականին գրված «Թուրքիայի անդամահատումը» հոդվածում¹³ մանրամասնորեն վերլուծելով Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը՝ Ադոնցը գրում էր. «Հայտնի է, որ ոչ մի պետության մեջ չկան այնքան ճնշված ժողովուրդներ, քան Թուրքիայում և ոչ մի տեղ նրանց ճնշումը չի հասցված այնպիսի ստրկացման, որքան սուլթանի իշխանության տակ: Հասկանալի է նաև, որ պատերազմի արդյունքներն ամենից առաջ իրենց պետք է զգացնել տան Թուրքիայում. նրա նկատմամբ պետք է կիրառվի ինքնորոշման ազատագրական իրավունքը»¹⁴:

Սևրի պայմանագրի վերաբերյալ հայ պատմագիտության մեջ իր պատմաքննական արժեքով առանձնանում է արդեն 1920 թ. հոկտեմբերի 20-ին գրված «Հայկական հարցը Սևրում» հոդվածը¹⁵:

Այստեղ քննարկված հիմնախնդիրների շրջանակը բավականին լայն է: Հանգամանալից ներկայացված է 1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո Հայկական հարցի նկատմամբ արևմտյան դաշնակիցների վերաբերմունքը: Քննարկելով ապագա Ամբողջական Հայաստանի ենթադրվող սահմանների հարցը՝ Ադոնցը հիմնավորված կերպով ներկայացնում է հայոց նորաստեղծ պետության իրական սահմանները, իրավացիորեն դրանք գնահատելով որպես «բուն Հայաստանի գոյության պայման»: Այս առումով, մեջբերենք նրա եզրակացությունները. «Օսմանների կայսրությունը հիրավի ջախջախված է: Այն կրեց պատիժ, որին լիովին արժանի էր: Եվրոպան վերջապես քաջություն ունեցավ եթե ոչ ամբողջովին ձգնելու, ապա քաշելու թունավոր օձի ատամը, որին դարեր շարունակ նա ինքն էր տաքացրել սեփական քաղաքակրթության կրծքին»¹⁶: «Հայկական հարցի լուծումը Թուրքիայում փաստորեն հետաձգված է: Իսկ Հայկական հարցի պատմությունը ցույց է տալիս, որ ամեն մի անորոշություն, ամեն մի ձգձգում կործանարար անդրադարձ է ունենում հայերի ձակատագրի վրա»¹⁷:

Լինելով անկուսակցական պատմաբան՝ Ն. Ադոնցն այդ հանգամանքն առավել առարկայաբար և լայնորեն է կիրառել իր հրապարակախոսության մեջ, ինչի վկայությունը 1930 թ. գրված «Հայաստանը և հայկական գաղթօջախները» հոդվածն է, որտեղ ներկայացրել է Խորհրդային Հայաստանի և սփյուռքահայ համայնքների համակողմանի վիճակագրական վերլուծությունը¹⁸:

Հենց այս տեսանկյունից ուշագրավ պետք է համարել ժամանակին Ս. Վրացյանի արտահայտած հետևյալ տեսակետն Ադոնցի մասին. «Հակառակ, որ կպատկաներ պահպանողական ուղղութեան, իր լայնախոս

12 Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 177:

13 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 178-202:

14 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 178:

15 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 206-220: Այն նույնպես անգլերենով 1920 թ. տպագրվել էր Լոնդոնում: Բնագիրը պահպանվում է Համագգայինի Բեյրութի արխիվում:

16 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 206:

17 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 209:

18 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 265-281:

բնատրությունը ան բարեկամներու լայն շրջանակ ուներ էն ազատամիտ-արմատականներու, էն դաշնակցականներու, էն նոյնիսկ բոլշևիկների մէջ՝ չնայած, որ վերջիններս անհանդուրժելի գրկանքներու ենթարկած էին զինքը»¹⁹:

Գրախոսվող հատորի հավելվածում ներկայացված են նաև 1911 թ. ռուսական «Նոր հանրագիտական բառարան»-ում հրապարակված Ն. Ադոնցի ծավալուն և արժեքավոր հոդվածները Հայոց պատմության, գրականության և լեզվի վերաբերյալ²⁰: Հատկապես հարկավոր է կարևորել ՀՅԴ Մեծ դատավարության ժամանակ որպես վկա հանդես եկած՝ Ն. Ադոնցի ցուցմունքի առաջին անգամ հրապարակումը²¹:

Հատորի ուշագրավ կողմերից է մանրամասն ծանոթագրությունների առկայությունը:

Ամփոփենք. որպես հրապարակախոս՝ Ն. Ադոնցը հանդես է եկել հայության քաղաքական ճակատագրի համար վճռորոշ և բեկումնային պահերին՝ հոգեպես ազդվելով տեղի ունեցող ողբերգական իրադարձություններից և իր հերթին որոշակիորեն ներգործելով հայ հասարակական-քաղաքական մտքի վրա:

Լինելով դասական հայագիտության կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Ն. Ադոնցը չէր կարող իր հրապարակախոսությանը խոր գիտական ենթատեքստ չտալ: Մանավանդ, պետք է նկատի ունենալ այն պարագան, որ Ադոնցը համալսարանական լսարաններին կառչած կաբինետային գիտնական չէր: Նման իրողությունից է ծնունդ առել Ադոնց հրապարակախոսի ակտիվ դիրքորոշումը՝ ազգային և հանրային անցուդարձը ներկայացնել, վերլուծել և գնահատել գիտաքննական ու պատմահամեմատական մեթոդաբանությամբ:

Ցավոք, ադոնցյան հրապարակախոսությունը գրեթե չի արժանացել հայ քաղաքական գործիչների և պատմաբանների ուշադրությանը՝ թե՛ տեսական և թե՛ գործնական տեսանկյունից: Ուստի համոզված ենք, այս առումով ևս ներկա հատորի հրատարակումը կարևոր ծանաչողական նշանակություն կունենա: Այն օգտակար կլինի նաև քրդական խնդրի ժամանակակից զարգացումներով հետաքրքրվողների համար:

Ականավոր պատմաբանի ամբողջական պատմաբանասիրական ժառանգության հետ մեկտեղ հայ ընթերցողի սեղանին դրվեց այդքան սպասված հրապարակախոսական ընտրանին: Հուսանք, որ մի օր հրատարակված կտեսնենք նաև Ն. Ադոնցի «Նամականին»:

Ա. Հ.

ORATORICAL HERITAGE OF NICHOLAS ADONTZ

A.H.

19 Վրացեան Ա., Փրոֆ. Ն. Ադոնց, «Հայրենիք» օրաթերթ, 1942, փետրվարի 27:

20 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 300-365:

21 Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հտ. Զ., էջ 296-299: Այս դատավարության թղթապանակն իր կարելի կողմերով արդեն իսկ հրապարակվել է «Վէմ»-ում: